

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Այսինքն՝ լույս է տեսել Ավետիք Իսահակյանի երկերի տասնչորսհատորյա ակադեմիական ժողովածուի առաջին հատորը: Այո, սա իրոք նշանակալից իրադարձություն է այսօրվա մեր հոգևոր կյանքում, որ այնքան էլ հարուստ չէ նման ամբողջարժեքով...

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բազմամյա ջանքերով հայ դասականներից շատերը արդեն ակադեմիական հրատարակությամբ ներկայացված են ընթերցողին: Այդ հրատարակություններից մի քանիսը, ինչպես, ասենք, Աբովյանին, Նալբանդյանին, Սունդուկյանին, Պատկանյանին, Պարոնյանին, մանավանդ Յովհաննես Թումանյանին, արդեն կոթողային արժեք ունեն: Թվարկվածների շարքում պետք է լիներ նաև Ավետիք Իսահակյանին: Բայց հանգամանքների բերումով իրականացվում է միայն այսօր՝ մեր դժվարին ժամանակներում: Եվ դա խորհրդանշական իմաստ ունի: Գրեթե մեկ դար առաջ Վարպետը մարգարեացել էր, որ երբևէ ոգու սով է գալու: Այժմ այդ մարգարեությունը սպառնում է իրականություն դառնալ, և գրական-մշակութային այսպիսի նախաձեռնություններն են, որ պիտի կանխեն աղետը...

Երկու ամգամ արդեն՝ 1958 թ. Վարպետի մահվան և 1975 թ. նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, կառավարական որոշումներով Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին հանձնարարվել է իրականացնել Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակությունը: Բայց այդպիսի լուրջ խնդիր հաջողությամբ լուծելու համար ինստիտուտը հավանաբար պատրաստ չի եղել: Բանաստեղծի ծեռագրերի մեծ մասը դեռևս անմշակ վիճակում գտնվում էր տարբեր պահոցներում, մամուլում ցրված նյութերը հավաքված չէին: Անհրաժեշտ էր այս ամենը ի մի բերել, համակարգել: Իսկ դրա համար տարիներ էին հարկավոր:

Իսահակյանի մահից հետո ավելի քան չորս տասնամյակի ընթացքում եղել են նրա ստեղծագործությունների հավաքման և հրատարակության, ստեղծագործական կենսագրության ուսումնասիրության մի քանի փորձեր, ինչպես, ասենք, «Արձակ էջեր» (1963), «Երկերի ժողովածու վեց հատորով» (1973-1979), «Հիշատակարան» (1974), «Ավետիք Իսահակյանը արվեստի մասին» (1977), Ավիկ Իսահակյանի «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն», փիզեն Իսահակյանի «Հայրս» գրքերը և այլն: Այդ տարիներին արդյունավետ աշխատանք է կատարվել նաև Վարպետի պահպանված ծեռագրերի ուսումնասիրության և համակարգման, մամուլում ցրված նրա ստեղծագործությունների հավաքման ուղղությամբ:

Ահա այս ամենը հիմք ունենալով՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստի-

տուտում անցյալ դարի 90-ական թվականներին լրջորեն ծեռնամուխ եղան Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակության պատրաստմանը, որին դարձյալ վիճակված էր ընդհատվել հայտնի իրադարձությունների բերումով: 2002 թվականին ինստիտուտում ստեղծվեց հատուկ գիտահետազոտական խումբ, որ վերջապես սկսեց իրական աշխատանքը: Մեկ տարի անց հրատարակվեց տասնչորսհատորյակի առաջին հատորը, որ արդեն վստահություն է ներշնչում, որ ամբողջական հրատարակությունը այս անգամ անպայման գլուխ կգա:

Ինչպես նշվում է խմբագրական խորհրդի առաջաբանում, հրատարակությունն իրականացնող խումբը աշխատել է հանրությանը ներկայացնել հնարավորին չափ լիակատար և գիտական հրատարակության բոլոր պահանջները բավարարող ժողովածու: Լույս տեսած հատորը ցույց է տալիս, որ գիտական խումբը լիապես ի վիճակի է ըստ պատշաճի կատարելու իր առջև դրված խնդիրը:

Առաջին հատորն ընդգրկում է Վարպետի կենդանության օրոք պարբերական մամուլում և առանձին գրքերով հրատարակված բոլոր բանաստեղծությունները: Հայտնի է, որ խորհրդային տարիներին ոչ մի, անգամ հեղինակի իսկ ձեռքով կազմված ժողովածու չի արտացոլել նրա քնարերգության ամբողջական պատկերը: անհարկի հապավումներ կատարվել են նույնիսկ այնպիսի ավարտուն գրքի վերահրատարակության ժամանակ, ինչպիսին «Երգեր ու վերքեր»-ն է: Նոր լույս տեսած հատորում առաջին անգամ բանաստեղծի ստեղծագործության այդ մասը ընթերցողին ներկայացվում է իրոք լիակատար ամբողջականությամբ:

Հատորի հեղինակները պահպանել են ակադեմիական հրատարակության հիմնական սկզբունքը՝ բանաստեղծությունները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ: Դրա շնորհիվ ընթերցողը քայլ առ քայլ կարող է հետևել տասնամյակների ընթացքում բանաստեղծի ստեղծագործության թեմաների, մոտիվների, գաղափարների ու տրամադրությունների աշխարհում կատարված բոլոր տեղաշարժերին:

Բանաստեղծությունների բնագրերը պատրաստելիս կազմողները հիմք են ընդունել առաջին հերթին հեղինակի ինքնագրերը՝ ձեռքի տակ ունենալով ոչ միայն Հայաստանի արխիվներում, այլև Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի ձեռագրատներում պահպանված նյութերը: Ինքնագրի բացակայության դեպքում հիմք է ընդունվել առաջին տպագրությունը բանաստեղծի կենդանության օրոք:

Հատորի երկրորդ բաժինը հատկացված է բանաստեղծությունների տարբերակներին ու բնագրային տարբերություններին: Ակադեմիական հրատարակություններում ընդունված է, որ տարբերակները բնագրային տարբերություններից առանձին բաժին են կազմում: Հավանաբար նկատի ունենալով, որ Վարպետի կենդանության ժամանակ տպագրված նրա բանաստեղծությունների համեմատաբար քիչ մասն ունի բուն բնագրագիտական իմաստով տարբերակ՝ հատորի հեղինակները դրանք տվել են բնագրային տարբերությունների հետ միասին: Թե ինչ նկատառումով՝ չի բացատրվում. միայն տեղեկացվում է, որ մյուս հատորներում ավելի ծավալուն երկերի՝ պոեմների, բալլադների, առակների և այլն, տարբերակները տրվելու են առանձին բաժնով: Այդ դեպքում ո՞րն է

սկզբունքային տարբերությունը: Հատորի առաջաբանում ասվում է, որ «մի շարք տարբերակներ ունեն ինքնուրույն գեղարվեստական արժեք»: Թվում է, ուրեմն, որ ավելի նպատակահարմար կլիներ տարբերակներին հատկացնել առանձին ենթաբաժին. բնագրային տարբերությունների հոսքի մեջ դրանց ինքնուրույն արժեքը աննկատ է մնում:

Բնագրային տարբերությունները տրված են բժախնդիր խնամքով: Դրանց շարժը ժամանակի ընթացքում հրատարակությունից հրատարակություն, հետաքրքիր նրբերանգներ է պարզում բանաստեղծի աշխատանքի, լեզվամտածողության, առհասարակ բառի, պատկերի, խոսքի զգացողության վերաբերյալ: Հատորի վերջում զետեղված համառոտագրությունների ցանկը դյուրացնում է հաղորդակցությունը այդ բաժնի հետ:

Հատորն ունի ծանոթագրությունների հարուստ բաժին, ուր տրվում է անխտիր բոլոր բանաստեղծությունների «կենսագրությունը»՝ գրության ժամանակը, տեղը, հանգամանքները, տարբեր հրատարակությունների զանազանությունները, մշվում է այն ծեռագիրը կամ առաջին տպագրությունը, որ հիմք է ընդունված հիմնական բնագրի համար:

Հատորի տպագրությունը բարձրորակ է: Կարելի է զարմանալ, սակայն, որ գրքի բոլոր բաժինները տպագրված են նույն տառատեսակով, միայն ծանոթագրությունների տառաչափը մի քիչ փոքրացված է: Մինչդեռ ժամանակակից տպագրական արդյունաբերությունը բազում տառաձևեր ու տառատեսակներ օգտագործելու լայն հնարավորություններ ունի: Անշուշտ, այդ հնարավորությունները ավելի արդյունավետ կօգտագործվեն հաջորդ հատորներում:

Տեղ-տեղ հանդիպում են վրիպակներ, որ երբեմն աչք են ծակում: Օրինակ՝ խմբագրության առաջաբանում «Կ մասնիկ»-ի փոխարեն տպագրված է «Կ մակդիր»: Հասկանալի է, որ ոչ մի հրատարակություն զերծ չի կարող լինել վրիպակներից: Բայց դրանք սովորաբար տրվում են ուղղումների հատուկ թերթիկով, որ հատորում չկա:

Գրքի սկզբում զետեղված «Ավետիք Իսահակյան» ակնարկում Ավիկ Իսահակյանը ներկայացնում է Վարպետի երկարատև ստեղծագործական կյանքի, հատկապես նրա հասարակական-քաղաքական գործունեության կարևոր դրվագները, որոնք մի զգալի մասով անծանոթ են: Հատորի վերջում դարձյալ Ավիկ Իսահակյանը «Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները» վերտառությամբ հողվածում համառոտ բնութագրումներով ներկայացնում է Վարպետի բանաստեղծությունների բոլոր այն ժողովածուները, որ լույս են տեսել նրա կենդանության օրոք, աշխատում է ճշգրտել դրանց տեղը ինչպես հեղինակի ստեղծագործության, այնպես էլ ժամանակի հայ քնարերգության համատեքստում:

Հատորի բնագիրը հրատարակության պատրաստել և ծանոթագրել է Ավիկ Իսահակյանը, տարբերակների ու բնագրային տարբերությունների բաժինը պատրաստել են Շողեր Խաչատրյանը և Անահիտ Վարդանյանը: Հատորը խմբագրել է Ազատ Եղիազարյանը: